ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» սեպտեմբերի 2018 թվականի N 39

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՎԱՉԻԿԻ ՕՀԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի բնակիչ Ժենիկ Վարդանի Օհանյանի դիմումը և համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 27.09.2018թ. թիվ 1 արձանագրությունը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի անչափահաս բնակիչ Սյուզաննա Վաչիկի Օհանյանի /ծնված 22.07.2006թ./ նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով նրա տատին՝ Ժենիկ Վարդանի Օհանյանին:
2. Հսկողություն սահմանել Սյուզաննա Վաչիկի Օհանյանի նկատմամբ խնամակալ նշանակված Ժենիկ Վարդանի Օհանյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, սեպտեմբերի 28
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաոլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» սեպտեմբերի 2018 թվականի N 38

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 72-Ն, 2018 թվականի հունվարի 30-ի N4 որոշումը՝ որոշում եմ.

1. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում ծնված երեխաների ծնողներին՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի բնակչի մահվան դեպքում ընտանիքի անդամին՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Դրամական օգնություն տալ համայնքի պարտադիր զինվորական ծառայությունից զորացրվող բնակիչներին՝ համաձայն թիվ 3 հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, սեպտեմբերի 25
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի
N 38 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Ծնված երեխաների ծնողներին

Հ/Հ	Երեխայի ազգանուն, անուն, հայրանունը	Երեխայի ծննդյան օրը	Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը	Գումարի չափը
1	Շահումյան Դանիել Էդուարդ	28.08.2018	Հակոբյան Վարդուշ Միշայի	30 000
2	Զաքևոսյան Մարի Խաչիկ	23.08.2018	Զաքևոսյան Խաչիկ Էդիկի	30 000
3	Զաքևոսյան Մերի Խաչիկ	11.07.2018	Զաքևոսյան Խաչիկ Էդիկի	30 000
4	Աբրահամյան Ռուբեն Հովհաննես	24.09.2018	Աբրահամյան Հովհաննես Ռուբենի	30 000
5	Գասպարյան Սյուզաննա Սարգիս	30.09.2018	Գասպարյան Սարգիս Վահրամի	30 000

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ԳԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի
N 38 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Հարազատին կորցրած ընտանիքին դրամական օգնություն տալու

Հ/Հ	Մահացածի ազգանուն, անուն, հայրանունը	Մահվան ամսաթիվ	Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը	Գումարի չափը
1	Հարիկյան Հրանուշ Արշավիրի	26.09. 2018թ.	Հարիկյան Հովհաննես Աշոտի	50 000

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի
N 38՝ ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Պարտադիր զինվորական ծառայությունից

զորացրված բնակիչներին դրամական օգնություն տալու

ՀՀ	Պարտադիր զին.ծառայությունից վերադարձած անձի ազգանունը, անունը, հայրանունը	Գումարի չափը
1	Մանուկյան Արմեն Վաչագանի	20 000

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» սեպտեմբերի 2018 թվականի N 37

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան է դիմել համայնքի բնակիչ Արտուշ Երվանդի Սարգսյանը՝ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Ռաֆֆու փողոցի 1-ին փակուղու թիվ 9 հասցեում կառուցված բնակելի տան և դրան կից բնակելի նշանակության օժանդակ շինությունների և դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա հողամասի (հիմք՝ ԱՁ «ՄԱՉԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ» /որակավորման վկայական 0244/ կողմից՝ տրված չափագրություն) գույքային իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Ռաֆֆու փողոցի 1-ին փակուղու թիվ 9 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցված բնակելի տան, ծածկի, զուգարանի, լոգարանի, թռչնանոցի, կիսաքանդ շինության, թոնրատան ու պարսպի և դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա 0.0752 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ քաղաքացի Արտուշ Երվանդի Սարգսյանի /ծնվ. 15.10.1960թ./ գույքային իրավունքները՝ վերականգնելով նրա սեփականության իրավունքը 1960-1982թթ. կառուցված բնակելի տան /33,6քմ/, ծածկի

/5,8քմ/, զուգարանի /2,5քմ/, լոգարանի /5,7քմ/, թռչնանոցի /3,7քմ/, կիսաքանդ շինության /11,6քմ/ և թոնրատան /20,5քմ/ և պարսպի /1,8քմ/ և 0.0752 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

Բնակելի տունը, ծածկը, զուգարանը, լոգարանը, թռչնանոցը, կիսաքանդ շինությունը, թոնրատունը ու պարիսպը բավարարում են «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները: Հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Արտուշ Երվանդի Սարգսյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, դրանում առկա բնակելի տան, ծածկի, զուգարանի, լոգարանի, թռչնանոցի, կիսաքանդ շինության, թոնրատան ու պարիսպի նկատմամբ՝ տրամադրելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
3. Բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասին՝ բնակելի տնով, տրամադրել Ռաֆֆու փողոցի 1-ին փակուղու թիվ 9 հասցեն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, սեպտեմբերի 25
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

այաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
ուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
ռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» սեպտեմբերի 2018 թվականի N 36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 33 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԱՂՈՂ ԱՅԳՈՒ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշմամբ՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի վարչական տարածքում գտնվող 36 քմ մակերեսով համայնքային սեփականության գյուղատնտեսական այլ հողատեսքը փոխադրել գյուղատնտեսական խաղողի այգու:
2. Սույն որոշման մեկ օրինակը ընդունելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, սեպտեմբերի 13
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

այաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
ուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
ռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» սեպտեմբերի 2018 թվականի N35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ Գ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան է դիմել քաղաքացի Իրինա Միրզոյանը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք սեփականության վկայական N 05042012-04-0035, տրված 05.04.2012թ, «Կադաստրային սերվիս կենտրոն» ՍՊԸ-ի /որակավորման վկայականի համարը՝ 0027/ կողմից տրված չափագրությունը և եզրակացությունը/ համայնքի Գ. Լուսավորիչ փողոցի թիվ 32 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված ընդհանուր 421.68 քմ մակերոսով բնակելի տան և օժանդակ շինությունների /ինքնակամ 11.28 քմ օժանդակ շինություն, 216.82 քմ բնակելի տուն, 3.36 քմ բաց պատշգամբ, 75.99 քմ ծածկ, 22.55 քմ պարիսպ/ օրինականացնելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ին N470-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավուքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝ որոշում եմ.

1. Օրինական ճանաչել քաղաքացի Իրինա Միրզոյանին սեփականատիրության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Գ. Լուսավորիչ փողոցի թիվ 32 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված ընդհանուր 421.68 քմ մակերոսով բնակելի տունն և օժանդակ շինությունները /ինքնակամ 11.28 քմ օժանդակ շինություն, ինքնակամ 216.82 քմ բնակելի տուն, ինքնակամ 3.36 քմ բաց պատշգամբ, ինքնակամ 75.99 քմ ծածկ, ինքնակամ 22.55 քմ պարիսպ/:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար սահմանված 793 279 դրամ /յոթ հարյուր իննսուներեք հազար երկու հարյուր յոթանասունինը/ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Նշված շինությանը տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Մուսալեռ, Գ. Լուսավորիչ փողոց, թիվ 32:
4. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզային միավորված ստորաբաժանման կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, սեպտեմբերի 12
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

այաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
ուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
ռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» սեպտեմբերի 2018 թվականի N 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 33 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԱՂՈՂ ԱՅԳՈՒ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշմամբ՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի վարչական տարածքում գտնվող 33 քմ մակերեսով համայնքային սեփականության գյուղատնտեսական այլ հողատեսքը փոխադրել գյուղատնտեսական խաղողի այգու:
2. Սույն որոշման մեկ օրինակը ընդունելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, սեպտեմբերի 12
գ. Մուսալեռ